

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՊՎԾ-ՄԱԾՁԲ-19/08**

ք. Երևան

«13» 08 2019թ.

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն) ի դեմս գլխավոր քարտուղարի պաշտոնակատար Անի Բաղդասարյանի, որը գործում է Ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Մ-Բի-Ռ» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Վ. Բաղդասարյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 374400 (երեք հարյուր յոթանասունչորս հազար չորս հարյուր) ՀՀ դրամ:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0.5 (օրը սամոռո հինգ տասներորդական) տոկոսի չափով:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (\$ՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպքում պահանջում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է --- էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ ՈՒ

Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության ֆինանսների
նախարարության գործառնական վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

Կ Ա Տ Ա Ր Ո Ղ

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220083335012000
ՀՎՀՀ՝ 08417829

Գլխավոր քարտուղար՝



Ա. Բաղդասարյան
(ստորագրություն)

Տնօրեն՝



Ս. Բաղդասարյան
(ստորագրություն)

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

«Ղ դրամ

հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	Ծառայության			Մատուցման	
				Միավոր ծառայությունների գինը /առանց ԱՀՀ	ընդհանուր գինը/ «Ղ դրամ	ընդհանուր քանակը	հասցեն	Ժամկետը**
1	50111130/1		Դրամ	374400	374400	1	Երևան, Մաշտոցի 47	2019թ. III-IV – եռամսյակ՝

Տեխնիկական բնութագիրը

Հ/Հ	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայլուղների և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/		
		TOYOTA LC 200 4.0, 2012թ	HYUNDAI ELANTRA, 2015թ.	HYUNDAI ELANTRA, 2011թ.
1	2	3	4	5
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը			
1	Բռնկման համակարգի ստուգում	0	0	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0	0	0
3	Յուղման համակարգի ստուգում	0	0	0
4	Արտացման համակարգի ստուգում	0	0	0
5	Կցորդման համակարգի ստուգում	0	0	0
6	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0	0	0
7	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0	0	0
8	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0	0	0
9	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0	0	0
10	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0
11	ABS համակարգի ստուգում	0	0	0
12	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0
13	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	0	0	0
14	Գազի մեծակի ստուգում	0	0	0

15	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0	0	0
	SU-2 ներառվող ծառայությունների անվանումը			
16	Շարժիչի հանում տեղադրում	70000	50000	50000
17	Նույնը DOHC (2 բաշխիչ լիսեռ) դեպքում	0	0	0
18	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0
19	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0	0
20	Շարժիչի վերանորոգում	150000	120000	120000
21	Նույնը DOHC դեպքում	0	0	0
22	Նույնը V6-ի դեպքում	0	0	0
23	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	6000	6000	6000
24	Բ/լիսեռի կափարիչի հանում և տեղադրում	10000	8000	8000
25	Նույնը աջի համար (V6)	0	0	0
26	Նույնը ձախի համար (V6)	0	0	0
27	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	40000	40000	40000
28	Նույնը աջի համար (V6)	0	0	0
29	Նույնը ձախի համար (V6)	0	0	0
30	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	25000	25000	25000
31	Շարժիչի գլխիկի վերանորոգում	35000	35000	35000
32	Փականի խցուկի փոխարինում	3000	3000	3000
33	Նույնը V6-ի դեպքում	0	0	0
34	Բաշխիչ լիսեռի հանում և տեղադրում	7500	7500	7500
35	Նույնը V6-ի ձախի դեպքում	0	0	0
36	Նույնը V6-ի աջի դեպքում	0	0	0
37	Նույնը DOHC դեպքում	0	0	0
38	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	10000	8000	8000
39	Հրիչների փոխարինում SOHC	0	0	0
40	Նույնը DOHC դեպքում	0	0	0
41	Ատամնավոր փոկի փոխարինում	0	0	0
42	Նույնը DOHC դեպքում	0	0	0
43	Նույնը V6-ի դեպքում	0	0	0
44	Ծնկածն լիսեռի առջևի խցուկի փոխարինում	15000	15000	15000
45	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0
46	Նույնը DOHC դեպքում	0	0	0
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0
48	Նույնը V6-ի դեպքում	0	0	0
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0
50	Ծնկածն լիսեռի հետևի խցուկի փոխարինում	50000	50000	50000
51	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0	0
52	Մխոցային օդակների փոխարինում	35000	35000	35000
53	Նույնը DOHC դեպքում	0	0	0
54	Նույնը V6-ի դեպքում	0	0	0
55	Թափանիվի հանում և տեղադրում	0	0	0
	2. Ղեկավարման, սնման և յուղման			

56	Յուղի և յուղի զտիչի փոխարինում	2000	2000	2000
57	Յուղի պոմպի փոխարինում	25000	35000	35000
58	Նույնը DOHC դեպքում	0	0	0
59	Նույնը V6-ի դեպքում	0	0	0
60	Ղեկավարման բլոկի վերանորոգում	75000	75000	75000
61	Բռնկման կարգավորում	1000	1000	1000
62	CO կարգավորում	1000	1000	1000
63	Օդի զտիչի փոխարինում	1000	1000	1000
64	Սրահի զտիչի փոխարինում	1000	1000	1000
65	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	5000	5000	5000
66	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	16000	12000	12000
67	Վառելիքիմոնիչի փոխարինում	25000	12000	12000
68	Վառելիքի զտիչի փոխարինում	5000	8000	8000
69	վառելիքի բաքի հանում և տեղադրում	15000	10000	10000
3. Սառեցման և արտածման համակարգ				
70	Հովհարի փոկի հանում և տեղադրում	0	0	0
71	Հովհարի հանում և տեղադրում	6000	6000	6000
72	Ռադիատորի հանում և տեղադրում	5000	5000	5000
73	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0
74	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0	0	0
75	Ռադիատորի վերանորոգում	45000	40000	40000
76	Թերմոստատի փոխարինում	15000	15000	15000
77	Ջրի պոմպի փոխարինում	19000	18000	18000
78	Նույնը DOHC և V-6 դեպքում	0	0	0
79	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0
80	Ջրի պոմպի վերանորոգում	0	0	0
81	Նույնը DOHC դեպքում	0	0	0
82	Նույնը կոնդիցիոների դեպքում	0	0	0
83	Ընդարձակող բաքի փոխարինում	3000	3000	3000
84	Խլարարի հանում և տեղադրում	5000	5000	5000
85	Նույնը DOHC դեպքում	0	0	0
86	Ռադիատորի փողոկի հանում և տեղադրում	2000	2000	2000
87	Սրահի զտիչի փոխարինում	1000	1000	1000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ				
88	Բանվ.կամ գլխ.գլանի հանում և տեղադրում	0	0	0
89	Բանվ.կամ գլխ.գլանի վերանորոգում	0	0	0
90	Կցորդման սկավառակների և առանցքակալի փոխարինում	0	0	0
91	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	0	0	0
92	Վազբաչափի շարժաբերի փոխարինում	0	0	0
93	ԱՓՏ-ի կոնվերտերի հանում և տեղադրում	150000	130000	130000
94	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	150000	150000	150000
95	Նույնը V6-ի համար	0	0	0
96	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	50000	45000	45000
97	Նույնը V6-ի համար	0	0	0
98	ԱՓՏ-ի վերանորոգում	250000	250000	250000
99	Նույնը V6-ի համար	0	0	0
100	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	15000	15000	15000
5. Առջևի և հետևի կամրջակներ				

101	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	0	0	0
102	Առջևի կամ հետևի կամրջակի լիակատար քանդում և հավաքում	0	0	0
103	Առջևի կամ հետևի կամրջակի մասնակի քանդում և հավաքում	0	0	0
104	Առջևի կամ հետևի կամրջակի կիսասոնու հանում և տեղադրում	0	0	0
105	Կիսասոնու առանցքակալի փոխարինում	0	0	0
	6. Կախոց			
106	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	0	0	0
107	Տրավերսի հանում և տեղադրում	0	15000	15000
108	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	6000	6000	6000
109	Անվակունդի առանցքակալի փոխարինում	7000	7000	7000
110	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0	0	0
111	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	7000	7000	7000
112	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	5000	5000	5000
113	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	0	0	0
114	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	5000	8000	8000
115	Ձսպանակի հանում և տեղադրում	5000	5000	5000
116	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	6000	8000	8000
117	Ներքևի լծակի հանում և տեղադրում	6000	4000	4000
118	Ներքևի լծակի վռանների փոխարինում	5000	3000	3000
119	Առջևի աջ կամ ձախ ձգաների հանում և տեղադրում	4000	4000	4000
120	Միջին ձգանի հանում և տեղադրում	0	0	0
121	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	0	0	0
122	Վերևի լծակի հանում և տեղադրում	6000	0	0
123	Վերևի լծակի վռանների փոխարինում	4000	0	0
124	Գնդե հողակապերի փոխարինում	5000	5000	5000
125	Ծայրականների հանում և տեղադրում	3000	3000	3000
126	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	5000	5000	5000
127	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	5000	5000	5000
128	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	0	0	0
129	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	4000	4000	4000
130	Հետևի կայունարարի կանգնակի փոխարինում	4000	4000	4000
131	Հետևի զսպանակի փոխարինում	4000	4000	4000
132	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	6000	6000	6000
133	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	5000	4000	4000
134	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	4000	4000	4000
135	Կայունարարի կանգնակների հանում և	4500	4500	4500

136	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	3000	3000	3000
137	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	4000	4000	4000
138	Անվաբացքի կարգավորում	5000	5000	5000
139	Ջողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	500	500	500
7. Ղեկային մեխանիզմ				
140	Ղեկային կալունի հանում և տեղադրում	12000	12000	12000
141	Նույնը V6-ի համար	0	0	0
142	Ղեկային կալունի վերանորոգում	130000	130000	130000
143	ՂԿ-ի առանցքակալի և/կամ վռանների փոխարինում	0	0	0
144	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	0	0	0
145	Հիդրոուժեղարարի պոմպի հանում և տեղադրում	10000	10000	10000
146	Նույնը DOHC դեպքում	0	0	0
147	Հիդրոուժեղարարի փոկի հանում և տեղադրում	5000	5000	5000
148	Նույնը DOHC դեպքում	0	0	0
149	Հիդրոուժեղարարի փոխարակի հանում և տեղադրում	10000	10000	10000
150	Նույնը DOHC դեպքում	0	0	0
151	Նույն կողիցիոնների դեպքում	0	0	0
152	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	0	0	0
153	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	0	0	0
8. Արգելակային համակարգ				
154	Գլխ. գլանի հանում և տեղադրում	5000	5000	5000
155	Գլխ. գլանի վերանորոգում	0	0	0
156	Վակումային ուժեղարարի հանում և տեղադրում	8000	8000	8000
157	Բանվ. գլանի հանում և տեղադրում	0	0	0
158	Բանվ. գլանի վերանորոգում	0	0	0
159	Արգելակային համակարգի օդահանում	1000	1000	1000
160	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	3000	3000	3000
161	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	3000	3000	3000
162	Առջևի սուպպորտի վերանորոգում	4000	4000	4000
163	Հետևի սուպպորտի վերանորոգում	4000	4000	4000
164	Արգելակային փողրակի փոխարինում	2000	2000	2000
165	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	5000	5000	5000
166	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	5000	5000	5000
167	Հետևի կոճղակների փոխարինում	0	0	0
168	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	5000	5000	5000
169	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	5000	5000	5000
170	Արգելակային սկավառակի հղկում	6000	6000	6000
171	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	0	0	0
172	ABS-ի հանում և տեղադրում	6000	6000	6000
173	ABS-ի վերանորոգում	35000	35000	35000
174	Ձեռքի արգելակի ճոպանի հանում և տեղադրում	15000	15000	15000
175		10000	10000	10000

9. Էլեկտրասարքավորում				
176	Էլեկտրասարքավորման վերանորոգում	20000	20000	20000
177	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	10000	10000	10000
178	Գններատորի հանում և տեղադրում	8000	8000	8000
179	Նույնը V6-ի դեպքում	0	0	0
180	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0	0	0
181	Գններատորի վերանորոգում	10000	10000	10000
182	Մեկնարկիչի հանում և տեղադրում	8000	8000	8000
183	Մեկնարկիչի վերանորոգում	10000	10000	10000
184	Առջևի լապտերի հանում և տեղադրում	5000	5000	5000
185	Հետևի լապտերի հանում և տեղադրում	5000	5000	5000
186	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	10000	10000	10000
187	Վազքաչափի հանում և տեղադրում	0	0	0
188	Վազքաչափի ճուպանի հանում և տեղադրում	0	0	0
189	Սարքերի պանելի հանում և տեղադրում	0	0	0
190	Արագաչափի հանում և տեղադրում	0	0	0
191	Ազդանշանի հանում և տեղադրում	5000	5000	5000
192	Ապակեվազիչի շարժիչի հանում և տեղադրում	10000	10000	10000
193	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	10000	10000	10000
194	Ազդանշանային համակարգի տեղադրում	25000	25000	25000
195	Մագնիստոլային տեղադրում	10000	10000	10000
196	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	0	0	0
197	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	20000	20000	20000
198	Էլ/հաղորդալարերի հիմնական խուրցի հանում և տեղադրում	15000	15000	15000
199	Էլ/հաղորդալարերի երկրորդային խուրցի հանում և տեղադրում	10000	10000	10000
200	Էլեկտրական տվիչների փոխարինում	5000	5000	5000
201	Էլեկտրական անջատիչների փոխարինում	3000	3000	3000
202	Վառոցքի կոճի փոխարինում	2000	2000	2000
203	Վառոցքի մոմերի փոխարինում	10000	8000	8000
204	Կոնդիցիոների լիցքավորում	30000	30000	30000
205	Կոնդիցիոների վերանորոգում	45000	45000	45000
10. Այլ ծառայություններ				
206	Ավտոմեքենայի թափքի հղկում և ներկում, գինը 1 քառ.դմ-ի համար	8000	8000	8000
207	Անիվի հանում և տեղադրում	1000	1000	1000
208	Անվաղողի վերանորոգում	1000	1000	1000
209	Անիվի բալանսավորում	1000	1000	1000
210	Անիվի վալց	10000	10000	10000
211	CO-զոդման աշխատանքներ, գին 1 քառ.սմ-ի համար	1000	1000	1000
212	Խառատային աշխատանքներ, գին 1ժ համար	1000	1000	1000
213	Փականագործի աշխատանքներ, գին 1ժ համար	1000	1000	1000
214	Քարշակի ծառայություն գին 1կմ, համար	1000	1000	1000
215	Սրահի քիմմաքրում	25000	25000	25000
216	Դիմապակու հանում և տեղադրում	20000	20000	20000
217	ռետինե գորգերի հավաքածու	25000	25000	25000

	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քայտուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	TOYOTA LC 200 4.0, 2012թ	HYUNDAI ELANTRA, 2015թ.	HYUNDAI ELANTRA, 2011թ.
	1. Շարժիչ			
1	Շարժիչի բլոկ	350000	300000	300000
2	Շարժիչի գլխիկ	220000	200000	200000
3	Բարձիկ	450000	35000	35000
4	Շարժիչի գլխակի միջադիր	28000	25000	25000
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	140000	85000	85000
6	Շարժիչի բաշխիչ լիսեռ	25000	25000	25000
7	Շարժիչի փական դուրս մղող	9000	9000	9000
8	Շարժիչի փական ներս մղող	9000	9000	9000
9	Շարժիչի փականի խցուկ	2000	2000	2000
10	Ծնկաձև լիսեռ	360000	300000	300000
11	Ծնկաձև լիսեռի խցուկ առջևի	13000	13000	13000
12	Ծնկաձև լիսեռի խցուկ հետևի	18000	18000	18000
13	Ծնկաձև լիսեռի արմատական ներդիրներ	55000	40000	40000
14	Ծնկաձև լիսեռի շարժաթևային ներդիրներ	55000	40000	40000
15	Հենակային տափողակ	10000	10000	10000
16	Մխոց	25000	25000	25000
17	Մխոցային օղակներ	56000	55000	55000
18	Ատամնանիվ	0	0	0
19	Ատամնավոր փոկ	0	0	0
20	Շղթա	70000	65000	65000
21	Հիդրոձգան	30000	30000	30000
22	Հրիչ	15000	15000	15000
23	Հրիդրոհրիչ	0	0	0
24	Բամշակ	15000	15000	15000
25	Հանգստարար	20000	20000	20000
26	Թափանիվ	0	0	0
27	Թափանիվի պսակ	0	0	0
28	Խցուկ բաշխիչ լիսեռի	8000	8000	8000
29	Շկիվ	0	0	0
30	Շարժաթև	55000	55000	55000
31	Կարտերի միջադիր	10000	10000	10000
32	Միջադիր	10000	10000	10000
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ			
33	Յուղ շարժիչի SL/CF 15W40 հանքային, 1լիտր	2500	2500	2500
34	Յուղ շարժիչի SM/CF 10W40 կիսասինթետիկ, 1լիտր	4000	4000	4000
35	Յուղ շարժիչի SM/CF 5W40 սինթետիկ, 1լիտր	6000	6000	6000
36	Յուղի զտիչ	7000	7000	7000
37	Յուղի պոմպ	110000	80000	80000
38	Յուղի պոմպի շարժաթևեր	0	0	0
39	Յուղի ռադիատոր	0	0	0
40	Յուղի փողրակ	0	0	0
41	Յուղի ծորակ	0	0	0
42	Վառոցքի մոմ	6500	6500	6500
43	Վառոցքի կոճ	30000	30000	30000
44	Բենզոլբաք	0	0	0
45	Ինժեկտորի ֆորսունկա	25000	25000	25000

46	Վառելանյութի մղիչ էլեկտրական	35000	35000	35000
47	Վառելանյութի մղիչ մեխանիկական	0	0	0
48	Վառելանյութի զտիչ	28000	25000	25000
49	Վառելանյութի զտիչի նուրբ մաքրման	2500	2500	2500
50	Վառելանյութի փողրակ	2000	2000	2000
51	Աքսելերատորի ճոպան	0	0	0
52	Օդի զտիչ	10000	10000	10000
53	Ջերմաստիճանային տվիչ	0	0	0
54	Յուղի տվիչ	7000	7000	7000
55	Բաշխիչ լիսեռի տվիչ	35000	35000	35000
56	Օդի ծախսի տվիչ	10000	10000	10000
57	Արագաչափի տվիչ	10000	10000	10000
58	Հովհարի տվիչ	10000	10000	10000
59	Ջրի տվիչ	10000	10000	10000
60	Բենզոբաքի տվիչ	40000	40000	40000
61	Մարման ընթացքի կարգավորիչ	0	0	0
62	Մարման ընթացքի տվիչ	0	0	0
63	Ղեկավարման համակարգիչ	150000	150000	150000
64	Պարապ ընթացքի տվիչ	0	0	0
65	Դրոսելային փականի տվիչ	0	0	0
66	Թթվածնի տվիչ	50000	50000	50000
3. Սառեցման և արտածման համակարգ				
67	Հովհարի փոկ	0	0	0
68	էլեկտրական հովհար	120000	110000	110000
69	Ռադիատոր	130000	90000	90000
70	Ընդարձակող բաք	35000	25000	25000
71	Ռադիատորի փողրակ	2500	2500	2500
72	Թերմոստատ	25000	22000	22000
73	Ջրի պոմպի թևակ	0	0	0
74	Ջրի պոմպի առանցքակալ	0	0	0
75	Ջրի պոմպի թևակ	0	0	0
76	Սառեցման հեղուկ 1 լիտր	2200	2200	2200
77	Ջրի պոմպի սոնանիվ	0	0	0
78	Հոլովակ	15000	15000	15000
79	Փոկ	22000	16000	16000
80	Փոկ կոնդիցիոների	0	0	0
81	Սրահի զտիչ	10000	10000	10000
82	Ծորակ	0	0	0
83	Խլարարի ներդիր	3000	3000	3000
84	Խլարարի կախոց	5000	5000	5000
85	Կրոնշտեյն	0	0	0
86	Անուր (համուտ)	2000	2000	2000
87	Խլարար	50000	50000	50000
88	Ռեզոնատոր	60000	60000	60000
89	Վառարանի ռադիատոր	55000	65000	65000
4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ				
90	Կցորդման բանվորական գլան	0	0	0
91	Կցորդման գլխավոր գլան	0	0	0
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	0	0	0
93	Կցորդման տանող սկավառակ	0	0	0
94	Կցորդման տարվող սկավառակ	0	0	0
95	Կցորդման առանցքակալ	0	0	0
96	Կցորդման փողրակ	0	0	0
97	Համաժամիչ	0	0	0
		0	0	0

99	ԱՓՏ-ի գտիչ	25000	25000	25000
100	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	300000	300000	300000
101	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	120000	120000	120000
102	ԱՓՏ յուղ, 1 լիտր	11000	10000	10000
103	Հերմետիկ	3000	3000	3000
	5. Առջևի կամ հետևի կամրջակներ			
104	Հետևի կամ առջևի կամրջակ	0	0	0
105	Ռեդուկտոր	0	0	0
106	Գլխավոր փոխանցման ատամնանիվների կոմպլեկտ	0	0	0
107	Դիֆֆերենցիալ	0	0	0
108	Դիֆֆերենցիալի սատելլիտ	0	0	0
109	Տանող ատամնանիվի խցուկ	0	0	0
110	Տանող ատամնանիվի առանցքակալ	0	0	0
111	Դիֆֆերենցիալի առանցքակալ	0	0	0
112	Կիսաստնի	0	0	0
113	Կիսաստնու առանցքակալ	0	0	0
114	Կիսաստնու միջադիր	0	0	0
115	Կիսաստնու խցուկ	0	0	0
116	Կարգավորիչ տափողակ	0	0	0
	6. Կախոց			
117	Տրավերս	0	55000	55000
118	Կրոնշտեյն	0	0	0
119	Ձախ կամ աջ հողակապ	55000	45000	45000
120	Ձախ կամ աջ հողակապի փոշերթիկնոց	10000	8000	8000
121	Անվակունդ	45000	45000	45000
122	Անվակունդի խցուկ	0	0	0
123	Անվակունդի ներքին առանցքակալ	35000	33000	33000
124	Անվակունդի արտաքին առանցքակալ	0	0	0
125	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	35000	35000	35000
126	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	0	0	0
127	Ձախ կամ աջ հեղակապի խցուկ	10000	10000	10000
128	Հարվածամեղմիչի թասակ	25000	35000	35000
129	Ջսպանակ	25000	25000	25000
130	Առջևի հարվածամեղմիչ	80000	80000	80000
131	Հարվածամեղմիչի փոշերթիկնոց	10000	10000	10000
132	Հարվածամեղմիչի վռան	0	0	0
133	Ներքևի լծակ	60000	60000	60000
134	Ներքևի լծակի վռան	16000	13000	13000
135	Վերևի լծակ	60000	0	0
136	Վերևի լծակի վռան	16000	0	0
137	Գնդե հողակապ	22000	18000	18000
138	Առջևի կայունարար	0	0	0
139	Առջևի կայունարարի վռան	5000	5000	5000
140	Առջևի կայունարարի կանգնակ	17000	15000	15000
141	Առջևի կայունարարի առջևի վռան	0	0	0
142	Հետևի կայունարարի վռան	5000	5000	5000
143	Հետևի կայունարարի կանգնակ	16000	15000	15000
144	Հետևի զսպանակ	25000	25000	25000
145	Հետևի ցնցամեղմիչ	180000	65000	65000
146	Հետևի մետաղաձող (շտանգա)	35000	0	0
147	Հետևի մետաղաձողի (շտանգա) վռան	12000	0	0
148	Հետևի անկյունագծային լծակ	55000	0	0
149	Անկյունագծային լծակի վռան	12000	0	0

151	Զսպակի բռնիչ	0	0	0
152	Աջ կամ ձախ ձգան	16000	16000	16000
153	Ծայրակալ	17000	17000	17000
154	Ձգան մեջտեղի	17000	17000	17000
155	Անվահեծ	50000	50000	50000
	7. Ղեկային մեխանիզմ			
156	Ղեկային կալուն	650000	450000	450000
157	Ղեկային կալունի առանցքակալ	0	0	0
158	Ղեկային կալունի խաչուկ	22000	20000	20000
159	Հիդրոուժեղարար	250000	250000	250000
160	Հիդրոուժեղարարի փոկ	0	0	0
161	Հիդրոուժեղարարի վերանորոգման կոմպլեկտ	30000	30000	30000
162	Հիդրոուժեղարարի պոմպ	0	0	0
163	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	0	0	0
164	Ղեկային ձող	35000	35000	35000
165	Ղեկային ձողի ծայրակալ	0	0	0
166	Հիդրոուժեղարարի յուղ, 1 լիտր	5500	5500	5500
	8. Արգելակային համակարգ			
167	Գլխ. գլան	65000	45000	45000
168	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0	0	0
169	Վակումային ուժեղարար	120000	120000	120000
170	Բանվ. գլան	0	0	0
171	Բանվ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	0	0	0
172	Արգելակային փողրակ	15000	10000	10000
173	Սուպպորտի ուղղորդիչ	10000	10000	10000
174	Սուպպորտի մոնժետ	5000	5000	5000
175	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	40000	35000	35000
176	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	35000	30000	30000
177	Հետևի թմբուկային կոճղակների կոմպլեկտ	30000	30000	30000
178	Առջևի արգելակային սկավառակ	55000	45000	45000
179	Հետևի արգելակային սկավառակ	55000	40000	40000
180	Ձեռքի արգելակային ճոպան	30000	30000	30000
181	ABS-ի տվիչ	25000	25000	25000
182	Արգելակային հեղուկ, DOT-3 - 500գրամ	4000	4000	4000
183	Արգելակային հեղուկ, DOT-4 - 500գրամ	2000	2000	2000
184	Ձեռքի արգելակման բռնակ	0	0	0
	9. Էլեկտրասարքավորում			
185	Գեներատոր	150000	120000	120000
186	Գեներատորի դիողային կամրջակ	30000	30000	30000
187	Գեներատորի ռեկտ	30000	30000	30000
188	Գեներատորի առանցքակալ	8000	8000	8000
189	Գեներատորի խարիսխ	30000	30000	30000
190	Գեներատորի խարիսխի հետևի պլասմաս	0	0	0
191	Գեներատորի առջևի իրան	0	0	0
192	Գեներատորի հետևի իրան	0	0	0
193	Գեներատորի փաթույթ	35000	35000	35000
194	Գեներատորի փոկանիվ	30000	30000	30000
195	Գեներատորի կալունակ	0	0	0

197	Մեկնարկիչ	140000	110000	110000
198	Մեկնարկիչի ուել	0	0	0
199	Մեկնարկիչի ածուխ	15000	15000	15000
200	Բենդեքս	20000	20000	20000
201	Մեկնարկիչի կցորդիչ (ավտոմատ)	25000	25000	25000
202	Առջևի լապտեր	55000	55000	55000
203	Առջևի թարթիչ	0	0	0
204	Հետևի լապտեր	55000	55000	55000
205	Հետևի թարթիչ	0	0	0
206	Արգելակային լապտեր	0	0	0
207	Հակամշուշային լապտեր	30000	30000	30000
208	խցիկի լապտեր	0	0	0
209	խցիկի լապտերի լամպ	2000	2000	2000
210	Լամպ (քսենոն բլոկով)	35000	35000	35000
211	Առջևի լապտերի լամպ	10000	10000	10000
212	Հետևի լապտերի լամպ	2000	2000	2000
213	Առջևի թարթիչի լապտերի լամպ	0	0	0
214	Հետևի թարթիչի լապտերի լամպ	0	0	0
215	Հակամշուշային լապտերի լամպ	5000	5000	5000
216	Արգելակային լապտերի լամպ	2000	2000	2000
217	Էլեկտրական անջատիչ	5000	5000	5000
218	Էլեկտրական տվիչ	0	0	0
219	Էլեկտրական չափիչ սարք	0	0	0
220	Բռնկման կողպեք	0	0	0
221	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	0	0	0
222	Էլեկտրալարերի երկրորդային խուրց	0	0	0
223	Վառոցքային լարերի խուրց	0	0	0
224	Վառոցքի մոմի ծայրակալ	8000	8000	8000
225	Վազքաչափ	0	0	0
226	Վազքաչափի ճոպան	0	0	0
227	Արագաչափ	0	0	0
228	Ազդանշան	20000	20000	20000
229	Ապակեվազիչ	5000	5000	5000
230	Ապակեվազիչի շարժիչ	35000	35000	35000
231	Ապակեմաքրիչ	6500	6500	6500
232	Ապակեմաքրիչի խոզանակներ	3500	3500	3500
233	Դռների կենտրոնական փական	0	0	0
234	Ազդանշանային համակարգ	35000	35000	35000
235	Էլեկտրաամբարձիչ	0	0	0
236	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	0	0	0
237	Ներկ. լուծիչ, օժանդակ նյութեր գին 1դ/մ վերանորոգման համար	8000	8000	8000
238	Դիմապակի	48800	47800	47800
239	Դիմապակու ուեզին	0	0	0
Ընդհանուր գինը յուրաքանչյուր մեքենայի համար		9150000	7740000	7740000

* պարտավոր է Պարվիրաբուի պահանջով պրամադրել տեղեկանք՝ Պարվիրաբուի տրանսպորտային միջոցը Կարարողի տեխսպասարկման կայան ներկայացնելու օրվա և ժամի մասին:

* Ծառայությունները պետք է մատուցվեն Պարվիրաբուի տրանսպորտային միջոցը Կարարողի տեխսպասարկման կայանում գրանցվելու օրվանից հաշված առավելագույնը երեք աշխատանքային օրվա ընթացքում՝ առանց պահեստամասի փոխարինման ծառայության և առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ պահեստամասի փոխարինման ծառայության դեպքում:

* Կարարողը պարտավոր է SU-2-ի ժամանակ օգտագործել փվյալ ավտոմեքենայի արտադրող ընկերության կողմից արտադրված կամ նրա կողմից երաշխավորված պահեստամասեր և քսայուղեր:

* Ծառայության մատուցման վերջնաժամկետը sh կառոդ ավել լինել. օան տվյալ տառով ունեւտեմեռի 15-ո:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Հայաստանի Հանրապետության պետական
վերահսկողական ծառայություն
ք. Երևան, Մաշտոցի 47
Հայաստանի Հանրապետության
ֆինանսների նախարարության գործառնական
վարչություն
Հ/Հ 900011021954
ՀՎՀՀ 00183253

«Մ-ԲԻ-Ռ» ՍՊԸ
ք. Երևան, Մյասնիկյան 22/4
«Ակբա-Կրեդիտ Ագրիկոլ բանկ» ՓԲԸ
Հ/Հ՝ 220083335012000
ՀՎՀՀ՝ 08417829

Գլխավոր քարտուղար՝

Տնօրեն՝



Ս. Բաղդասարյան
(ստորագրություն)



Ս. Բաղդասարյան
(ստորագրություն)

Հավելված 2
 « 13 » 08 2018 թ. կնքված
 «ՊՎԾ-ՄԱԾԶԲ-19/08» ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՅԹՈՒՅՑ

Աճող. Հազ. ՀՀ դրամ

N	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (ԳՄ)	Անվանումը	Ընդամենը	Ծառայության														
				Նախատեսվում է ֆինանսավորել ՀՀ 2019 թ. պետական բյուջեի միջոցների հաշվին, ընդ որում՝														
				1-ին եռամսյակ			2-րդ եռամսյակ			3-րդ եռամսյակ			4-րդ եռամսյակ					
				1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	50111130/1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ	374,4	0,0	0,0	0,0	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
		Ընդամենը	374,4	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	0,0	274,4	274,4	374,4	374,4	374,4

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ԿԱՏԱՐՈՂ

Հայաստանի Հանրապետության պետական վերահսկողական ծառայություն
 ք. Երևան, Մաշտոցի 47
 Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության գործառնակայան
 վարչություն
 Հ/Հ 900011021954
 ՀՎՀՀ 00183253

«Մ-ԲԻ-Ո» ՍՊԸ
 ք. Երևան, Մյասնիկյան 22/4
 «Ալբա-Կրեդիտ Ազրիկոլ բանկ» ՓԲԸ
 Հ/Հ 220083335012000
 ՀՎՀՀ 08417829



Գլխավոր քարտուրսար
 (ստորագրություն)
 Ա. Բարդասարյան



Տնօրեն
 (ստորագրություն)
 Վ. Բարդասարյան

Պայմանագրի կողմ

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

Պատվիրատու

գտնվելու վայրը _____
հհ _____
հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ
ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

» 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « ____ » « _____ » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____

Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ «
» « _____ » 20 թ. դուրս գրված N ____ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն
արձանագրությունը հետևյալի մասին.

Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների							
Անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը ըստ վճարման ժամանակացույցի/
		ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

ստորագրություն

ազգանուն, անուն
Կ.Տ.

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման
նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

ազգանուն, անուն

ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

ազգանուն, անուն

ստորագրություն